

ՄԵՐ ԶԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՏՈԿՈՒՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՅՈՅՍ ԿՈՒ ՏԱՅ

1.- Սպասելով սպասեցի Տիրոջը, որ ծուկացա ինձի ու լսեց իմ աղաղակս եւ գիտ կորստեան փոսէն, տղմալից կաւէն հանեց ու ոտքերս վէմի վրայ ամրացուց ու քայլուածքս հաստատեց: (Սաղմոս 40:1,2)

2.- Ո՛չ միայն այսքան, այլ՝ տակաւին կը պարծենանք նաեւ մեր նեղութեանց մէջ, գիտնալով որ նեղութիւնները մեզի համբերութիւն կու տան, համբերութիւնը՝ տոկունութիւն, սոկունութիւնը՝ յոյս, իսկ յոյսը երբեք ամօթով չի ձգեր, որովհետեւ Աստուծոյ սէրը տեղ գտած է մեր սիրտերուն մէջ՝ մեզի տրուած Սուրբ Հոգիին միջոցաւ: (Հռոմայեցիս 5:3-5)

3.-Պէտք է համբերել գիտնալ, որ պէտքի Աստուծոյ կամքը կատարելով՝ իր խոստումին տիրանանք: (Եբրայեցիս 10:36)

Քրիստոս իր աստուածային գորութեամբ մեզի պարզեցեց ամէն ինչ, որ անհրաժեշտ է աստուածապաշտ կեանքի մը համար, մեզի ճանչցնելով ան, որ իր փառքովն ու գորութեամբը մեզ իրեն կանչեց: Անիկա թանկագին ու մեծամեծ խոստումներ տուաւ մեզի, որպէսզի անոնցմով հաղորդակից ըլլանք աստուածային բնութեան, ձերբազատուելով աշխարհի մէջ տիրող կորստաբեր ցանկութիւններէն: Անոր համար ալ ամէն ջանք ըրէք, որ ձեր հաւատքով առաքինութիւն ձեռք բերէք, առաքինութեամբ՝ գիտութիւն, գիտութեամբ՝ ժուժկալութիւն...

(Շարունակել կարգալ՝ Բ. Պետրոս 1:13-11):

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒՄՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Կազմակերպութեամբ Կրօնական Ժողովին եւ Ազգային Առաջնորդարանի Երիտասարդական Յանձնախումբին, Երեքշաբթի, 30 Ապրիլ 2019-էն սկսեալ եւ ամէն Երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00, Պուրճ Համուտի Ս. Վարդանանց Եկեղեցոյ մէջ պիտի մատուցուի սուրբ պատարագ:

Սուրբ պատարագը պիտի երգէ հաւատացեալ ժողովուրդը: Սուրբ պատարագի ընթացքին, հոգեւոր խորհրդածութիւն պիտի կատարէ Լիբանանի Հայոց Առաջնորդ՝ Գերշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:

Այս սուրբ պատարագին նպատակն է առիթ տալ մեր այն հայորդիներուն, որոնք Կիրակիի կողքին, շաբթուան ընթացքին եւս կը փափաքին Հայ Եկեղեցոյ հոգեւոր սնունդը ստանալ: Կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները իրենց ամենօրեայ հեւքին մէջ պահ մը կանգ առնելու եւ աղօթքով Աստուծոյ ու իրարու հետ ըլլալու:

Սիրելի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ԸՐԱԲՈՒԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak Ծրագր թերթ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՍՍԵՂ ԽՄ ՈՅԹԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119:105)

ԺԲ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 2 ՅՈՒՆԻՍ 2019

ԹԻՒ 22

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Գրծ. 23.12-35: Ա. Յհ. 5.13-21:
ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 12.12-23

ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ

Յաջորդ օր ժողովուրդի մեծ բազմութիւն մը, որ Չատկուան տօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, արմաւենիի ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով. «Ովսաննա՛, օրհնեալ ըլլայ ան, որ կու գայ Տիրոջ անունով, Իսրայէլի թագաւորը»:

Յիսուս էլ մը գտնելով նստաւ անոր վրայ, ինչպէս որ Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. «Սի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Սիոնի՛ աղջիկ, որովհետեւ թագաւորը քեզի կու գայ իշու մը աւանակին վրայ նստած»:

Յիսուսի աշակերտները այս բոլորը չհասկցան ատենին, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ, այն ատեն յիշեցին, թէ այս կատարուածները Յիսուսի համար գրուած էին եւ իրենք այդ գրուածն էր, որ կատարեցին: Բոլորն ալ կը վկայէին, թէ Յիսուս Վազարոսը կանչեց գերեզմանէն եւ զայն մեռելներէն յարուցանեց: Այս իսկ պատճառով Երուսաղէմ գտնուողները բոլորն ալ զինք դիմաւորելու ելան, որովհետեւ լսած էին թէ ի՛նչպէս ան յարութեան հրաշքը գործած էր: Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին. «Կը տեսնե՞ք որ բան մըն ալ չենք կրնար ընել. ահա ամբողջ աշխարհը իրեն կը հետեւի»:

Տօնին առիթով կարգ մը յոյներ ալ եկած էին Երուսաղէմ՝ Աստուծոյ երկրպագելու: Անոնք մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլիայի Բեթսայիդա քաղաքէն էր, եւ աղաչելով ըսին. «Տէ՛ր, կ'ուզենք Յիսուսը տեսնել»: Փիլիպպոս եկաւ Անդրեասին ըսաւ եւ երկուքը միասին Յիսուսի ներկայացուցին անոնց խնդրանքը: Յիսուս պատասխանեց. «Ահա մարդու Որդիին փառաւորուելու ժամը հասաւ»:

**ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕԳՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿՆԵՐ**

**ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
23.12-35**

Յաջորդ առաւօտ կարգ մը հրեաներ իրարու ֆով եկան եւ իրենք զիրենք նզովփի տակ դնելով երդում ըրին չուտել եւ չխմել՝ մինչեւ չսպաննեն Պօղոսը: Քառասուն հոգիէն աւելի էին այս երդումը ընողները: Ասոնք մօտեցան ֆահանայապետներուն եւ երէցներուն եւ ըսին. «Մենք մեզ նզովփի տակ դնելով երդում ըրինք բան չնաշակել, մինչեւ Պօղոսը չսպաննենք: Դուք Ատեանին անունով հազարապետին լուր դրկեցէ՛ք, որ զայն ձեզի դրկէ պատճառաբանելով, թէ կ'ուզէք իր մասին աւելի ստոյգ տեղեկութիւն ունենալ: Իսկ մենք պատրաստ կ'ըլլանք արդէն եւ տակաւին հոս չհասած՝ կը սպաննենք զինք»:

Պօղոսի ֆեռորդին այս դաւադրութիւնը իմանալով, եկաւ զօրանոց եւ Պօղոսին պատմեց: Պօղոս հարիւրապետներէն մէկը կանչելով ըսաւ. «Այս պատանին հազարապետին տար, որովհետեւ իրեն ըսելիք մը ունի»: Հարիւրապետը զայն հազարապետին տարաւ եւ ըսաւ. «Բանտարկեալ Պօղոսը զիս կանչեց եւ խնդրեց, որ այս պատանին ֆեզի բերեմ, որովհետեւ ֆեզի ըսելիք մը ունի»:

Հազարապետը պատանիին ձեռքէն բռնելով մէկ կողմ տարաւ եւ հարցուց. «Ի՞նչ ունիս ըսելիք»:

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ
5.13-21**

Ասիկա գրեցի ձեզի, Աստուծոյ Որդիին հաւատացողներուդ, որպէսզի գիտակցիք, թէ յաւիտենական կեանք ունիք: Ուստի համարձակ կերպով կը դիմենք Աստուծոյ, այն վստահութեամբ, որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք՝ կը լսէ մեզ: Եւ երբ գիտենք, թէ մեր խնդրանքները կը լսէ, գիտենք նաեւ, թէ պիտի ստանանք ինչ որ կը խնդրենք իրմէ:

Երբ տեսնես թէ հաւատացեալներէն մին գործեց մեղք մը, որ մահացու չէ, աղօթէ Աստուծոյ, որ կեանք տայ անոր: Ասիկա կ'ըսեմ միայն անոնց համար որոնց մեղքերը մահացու չեն, որովհետեւ մահացու մեղքեր ալ կան, որոնց համար չեմ ըսեր, որ աղօթէք: Ամէն անիրաւութիւն մեղք է, բայց ամէն մեղք մահացու չէ:

Գիտենք, թէ ով որ Աստուծմէ ծնած է՝ չի մեղանչեր, այլ Աստուծոյ ծնունդը՝ Քրիստոս, կը պահպանէ զայն եւ չարը անոր չի մօտենար: Թէեւ ամբողջ աշխարհը չարին ենթակայ ըլլայ, մենք գիտենք թէ Աստուծմէ ենք: Եւ գիտենք թէ Աստուծոյ Որդին եկաւ ու բացաւ մեր միտքերը, որպէսզի ֆանչնանք ճշմարիտ Աստուածը: Մենք միացած ենք ճշմարիտ Աստուծոյ եւ անոր Որդույն Յիսուս Քրիստոսի: Ա՛ն է ճշմարիտ Աստուածը եւ յաւիտենական կեանքը:

Որդիակներս, դուք ձեզ կուոքերէ հեռու պահեցէ՛ք:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ՊՏՏՈՒՄԾԱՇՈՒՄԸ: ՄԻՇՏ
ՊՏՏՈՒՄԾԱՇՈՒՄԸ ԿԱՐԴԱՆՔ:**

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԵՐԿՐՈՐԳ ԾԱՂԿԱԶԱՐԳ

Համբարձման յաջորդող Ս. Զատիկի եօթներորդ Կիրակին կը կոչուի Երկրորդ Ծաղկազարդ: Այս առթիւ Ծաղկազարդի ընթերցուածները ու շարականները նոյնութեամբ կը կրկնուին:

Երկրորդ ծաղկազարդի տօնախումբութիւնը սահմաններ է ներսէս Շնորհալիին եղբայրը՝ Գրիգոր Վկայասէր կաթողիկոսը, հիմնուելով Գրիգոր Լուսաւորիչի Խոր Վիրապի մէջ գտնուած ժամանակ պատահած մէկ աւանդական դէպքի վրայ:

Գրիգոր Լուսաւորիչը երբ կը գտնուէր Խոր Վիրապին մէջ, անոր կը սպասարկէր հրեշտակ մը: Համբարձման չորրորդ օրը՝ Կիրակի օր, հրեշտակը չերեւնար: Միւս օրը Լուսաւորիչը կը հարցնէ պատճառը եւ կը տեղեկանայ, որ այդ օրը երկնային քահանայապետութիւնը կը տօնէր Յիսուսի երկինք համբառնալը եւ նոյն օրը չորրորդ դասակարգութեան տօնն էր:

Գրիգոր Վկայասէր կաթողիկոսը յատուկ շարականով կը ճոխացնէ երկրորդ Ծաղկազարդի Կիրակին, որուն օրհնութիւնն է «Մեծահրաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ, զոր հոգւոց լուսատուն ի պաշտպանէն իւրմէ լուեալ, եթէ տօն մեծ է այսօր իմոյ դասուն որ ի յերկինս»:

– Որո՞նք են մարմինին թշնամի եւ կործանարար մոլութիւնները:

Եօթը մահացու մեղքեր կան, որոնք կը ծուարին մարդու ներսիդին եւ կը կրծեն զայն:

- 1.– Հպարտութիւնը կը կործանէ մարդը: (Առակ ԻԹ.23):
- 2.– Նախանձը ոսկորներու փտութիւն է: (Առակ ԺԴ.30):
- 3.– Բարկութիւնը մարդուն վնաս կը պատճառէ (Առակ ԺԹ.19), կը ցնցէ մարմինը ու կը տկարացնէ ջիղերը:
- 4.– Ծուլութիւնը իրեն ենթական կ'աղֆատացնէ ու կը մեղցնէ: (Առակ Ի. 13, ԻԱ.25):
- 5.– Ագահութիւնը իրեն անձնատուր եղողները կը մեղցնէ: (Առակ Ա.19):
- 6.– Որկրամոլութիւնը (որուն ծիրին մէջ կ'իյնան նաեւ արեւելքիւնն ու ծխամոլութիւնը) բազմաթիւ հիւանդութիւններու դուռ կը բանայ: Ամենայն ֆաղցրահամ եւ օգտակար ուտելիքը՝ մեղրն անգամ եթէ մէկը անյագօրէն ֆաշակէ, զայն կը փսխէ ու իր մարմինն առողջութեան վնաս կը բերէ: (Առակ ԻԵ.16,27): Իսկ խմիչքներն ու ծխախոտի մոլութիւնները մարդու մարմինը կը գործեն այլազան հիւանդութեանց վիհին մէջ:

7.– Բողոքոտութիւնը կ'ապականէ մարմինը, միտքն ու հոգին, ու մարդը կը մղէ դէպի անբարոյութիւն: (Մատթ. ԺԵ. 19):

Այս եօթը մոլութիւնները մարդուն մէջ կը յառաջացնեն անձնասիրութիւն, փառասիրութիւն, ցանկութիւն, անտեղի դժգոհութիւն, մտահոգութիւն, ջղային խանգարում, մեղամաղձոտութիւն եւ սրտի խռովութիւն: